



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19629

Վ. ԱՆԱՆՅԱՆ

ԵՐԱՆՉԻՆԱ  
ИНСТИТУТ  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԶՈՐԱՇԱՐԺ

Գ Ե Տ Զ Ր Ա Տ  
ՅԵՐԵՎԱՆ 1931

891.99

Ա-55



391.33

4-55

20 JAN 2006

39-1  
19 NOV 2010

Վ. ԱՆԱՆՅԱՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

# Զ Ո Ր Ա Ն Ա Ր Ժ

(ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Հ. Հ. ԴԻՎԻԶԻԱՅԻՆ  
1928 ԹՎԻ ԶՈՐԱՆԱՐԺԵՐԻՑ)



Գ Ե Տ Ը Ր Ա Տ

1931

Յ Ե Ր Ե Վ Ա Ն



12 FEB 2013

0005 MA. 03

19629

Պետերբուրգի տպարան  
Հրատ. № 1678  
Գլավի. № 6450 (բ)  
Պատվեր. № 3150  
Տիրաժ 4000



60722-67

### ԼԱԳՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՈՐԸ

Մանուսկրի հեղինակը փեշին փոփած ճերմակ վրանների քաղաքը:

Հաղերում յեռ ու գեռ ե:

Վաղվանից կսկսվեն խոշոր գորաշարժերը:

Վաղ առավոտից ճերմակ վրանները կծալվեն և կբարձրվեն շորիններին. սպիտակ քաղաքը կվերանա: Զորասլուները կմտնեն անտառ: Հեռախոյրները փորսոզ կտան ձորերում, թփուտների տակ: Յեվ յուրաքանչյուր մարտիկ փորձնական ճակատամարտում յերևան կհանի իր մարտունակութունը. իր խիզախ առաջխաղացումն ու հաջող նահանջը:

Իսկ այդ խոշոր գործի համար խոշոր ել նախապատրաստութուն ե պահանջվում:

Ահա ինչու այսոր կյանքն ավելի տենդուն ե լագերում: Հալաքվում են, կապում սաղաղներին բարձում ինչ վոր կա: Խորհրդակցութուններ ե գումարվում, ծեծվում են մանյուրայի հետ կապված խնդիրները: Շաաբում մի կուսմբ կարմիր հրամանատարներ նայում են քարեզին, նշաններ անում, վիճում:



Շտաբն այսոր ավելի աշխուժ ու արագ է  
գործում, ինչպես կգործի մարտական պայման-  
ներում: Հրահանգները՝ կարճ, վճռական:

Մտնում ենք մանյովրայի գինկոմի «կարի-  
նետը», ընդարձակ մի վրան:

Վճռական ու կրակոս գինկորական է յերե-  
վում:

Ծանոթանում ենք:

Պատասխանում է իմ հարցերին հակիրճ.

— Մանյովրայի նպատակն է սալ ձմեռային  
և ամառնային պարապմունքների հանրագումարը:  
Մենք կարմիրներ ենք, շարժվում ենք դեպի Հ.  
գյուղը: Կապույտները մեզ վրա յեն գալիս է,  
քաղաքից:

— Տվեք խնդրեմ գորաշալժի կոնկրետ խըն-  
դիրները:

Բարեսրտորեն ժպտում է:

— Չենք կարող ընկեր, ուղ լական պաղա-  
նիք է:

— Իսկ յե՞րբ դուրս կգնանք այտեղից:

— Դա ևս գաղտնիք է:

Պետք է քնել կարմիր բանակայինների հետ  
և «տրեվոգայի» ժամանակ հինգ բոպե չանցած,  
կազմ ու պատրաստ թռչել ձիււ վրա:

Այդպես է բանակում. յեպ մնացիր, պրծավ:

\* \*

— Տրան... տան... տան... հրնչում է սիգնալը:  
Վրաններից դուրս են թափվում կ. բանակային-  
երը և հավաքվում ճամբարի մարզադաշտում:

Խառնիճաղանձ, կանաչ բլուզավորների գոնդ-  
վածը, հրամանատարի մի հրամանով. համաչափ  
քառակուսիների ձև է ընդունում:

Հեծելազորերից մի խումբ մարտիկներ թա-  
փով գալիս շարվում են շտաբի առաջ և պած  
թռչում ձիերից:

Կարմիր բանակայինների հայացքներում շա-  
րժու մների մեջ, խոսակցության փութկոտու-  
թյան մեջ նկատում ես անհամբերություն:

— Ախար յե՞րբ ենք են մութը ծմակը  
մտնելու յե... ծմակին կարոտած սրտով խոսում  
է դազախեցի մի լսյնաթիկունք աղա:

«Ի՞նչ սար կբարձրանան» ա՛նցնում է մը-  
քովդ, յերբ նայում ես նրա ջլապինդ սրունք-  
ներին:

\* \*

Զինվորական նվազախումբն արյուն յեռա-  
ցնող մի «մարշ» ով մտնում է լագեր: Խմբի  
յետեվից ամուր դոփյունով առաջ է շարժվում  
Լուի Փամբակի կոմիտիտական բանակը՝ թվով



200 հոգի: Այդտեղ կան գավառի բոլոր բջիջներից: Կամավոր կերպով լեկել են մանյովբային մասնակցելու:

Ահա Ստեփանավանի ռազմական խմբակի ղեկավարը. վորը Յերեվանում գեկուցեց խմբակի աշխատանքների մասին:

— Հը, ախպերացու, խմբակդ վհնց ե, տղերքից սկի բան դուրս գալիս ե, հարցնում եմ:

— Ել անըմը տալ մի, տղերքը մինը մի ասլան ա դառել, ես ձմեռ ել գաղ չմնաց, ել պլիմոտ չմնաց, թամուզ սովրեցինք: Հիմի լել մանյովրի ձենը լսեցին թե չե բոլորն ել կամավոր լեկան գրվեցին վոր բանակի հետ տասն որով մանեվրի գնան:

— Ինչով եք լեկել:

— Այլուպանով կատակում ե լեկել:

— Հըն ե Դվալ սարը տենում ես: Դվալն ես ըշեր ովտով կտրեցինք, լուսաբացին հասանք եստեղ. ու մատով ցույց ե տալիս դիմացի ահադին լեռը:

Աշխուժ են առուլգ: Ձի լերեվում, վոր գիշերն անքուն են մնացել ու Դվալը կարել անցկացել:

Ահա և սանիտար կոմսոմոլիստակաների ջոկատը: Սպիտակ շորերի և գրոշակների վրա աչքի լեն

գարնվում կարմիր խաչերը: Այդ ջոկատը ձմեռն ավարտեց իր պարապմունքերը, իսկ այժմ պրակտիկ աշխատանք ե անում քաղաքի հիվանդանոցներում:

— Առաջին անգամն եք մանյովբայի գնում:

— Վնչ, լերրորդն ե: Մեկին մասնակցել ենք վորպես հարաձիգներ՝ տղերքի նման, իսկ մեկին՝ վորպես սանիտարներ:

— Վոր վիրավորվեմ, վոնց եք փաթաթելու:

Ծիծաղելով ցույց են տալիս վզներից կախած սուժակները:

— Եստեղ ինչքան ուզես յող ու փաթաթան ունենք, դու արխային վիրավորվիր՝ մենք մեր գործ գիտենք:

Ձե, ախպեր եսպեսի խմբի կողմից խնամվելու և փաթաթվելու համար արժե վիրավորվել:

\* \*

Վերադառնում ենք քաղաք Ծոսեյի աջ ափին, գետակի մոտ մի խումբ կանաչ բանակայինների շորերը վերջին անգամ լվանում են: Դիմացի բլրի լանջն սպիտակել ե փռած շապիկներից: Յերեկոյան տղերքը հազնելու լեն, վոր «կոիվ» գնան: Իրա համար են գեղջկուհիներն այնքան լեռանդով լվանում:



Յերեկո չե: Մի խումբ ձիավորներ լազերից արշավում են դեպի քաղաք:

Թիֆլիսի կողմից լեկավ ու ծանր վնասներով կանգ առավ զրահապատ մի գնացք: Ի՞նչ անարկուռ անք ունի անտերը: Պողպատե կողքերը և առաջ ու չետ ուղած գույգ-գույգ թնդանոթները զարգանդ են ազդում մարդու վրա: Իսկական կարմիր «բրանկոյիկ»:

Ջրհապատը ծղրտում է և շոգի ու փնչոց արձակելով առաջ շարժվում: Նրան կցված բաց վագոնի վրա մի խումբ կարմիր բանակայիններ որոտում են մարտական մի չերգ, վորն հետգհետե հեռանում է:

Թե բրանկոյիկի վրա՝ թե լազերում տիրում է ճակատամարտի նախորդակի մթնոլորտ, չե ու գեռ, անհամբեր սպասողական դրուժյուն:

Ուշ է. ճրագները մարվում են, ձախերը խաղաղվում: Լեռներից փչող մեղմ գեփյուռը շոյում է կարմիր բանակայիններին արհիվառ գեմքը և քաղցր քուն բերում նրան:

Սպիտակ քաղաքում կյանքը նիրհում է: Միայն լերբեմն լերվում է գարի ուտող ձիերի խրխնջոցը ե պահակների համաչափ քայլերի ձայնը:

Ղարաքլիսա ոպոստոսի 29 1929 թ.

## ԱՌԱՋԻՆ ԳՐՈՒՄ ԿԱՆՈՐՅԱԿԸ

Հուսաբացին ճերմակ վրանները մեկիկ մեկիկ ծավում վերանում են:

Արևածագից դեռ շատ առաջ բեռները կապած, բարձած են:

Լազերն իր վերջին ժամերն է ապրում: Սկսվում է խոշոր գորշարժերի շրջանը:

Շուտով գնդերը կշարժվեն դեպի լեռ՝ երը՝ փորձնական մարտ մղելու:

Ահա ինչու լազերում այժմ տոնական տրամադրություն է տիրում: Այսօր կ. բանակայինները սովորականից շատ են կատակում, ծիծաղում:

— Սերոբ, մե շալախո չալե:

Շուրջպար են բռնում ու աշխուժությամբ շալախո թռչում:

Ապարանցի մի աղա լեղանակը փոխում է ծանր ու մեկամաղձոտ մոտիվները:

Ջուր երի լցրի գյուռը

Բարով առնեմ եո ֆուրը,

Քու ֆուրն բնձի հավան չե

Տար ինձնե լավիս սուր:

Խումբը տակաով շորոբում է. աղբբբը հետգհետե տաքանում են, այլևս «բարով առնեմ քու քուրը» չի բավարարում, շատ է «ջանջալ»:



— Տվեք քոչարի: Բատինկաների համաչափ  
ու ուժգին գարկերից գետինը դողում է:

\* \* \*

— Շարվիր...

Մարգագաշտում դասակները գեղեցիկ քա-  
ռակուսիներ են կողմել, իսկ Նեծելագորը քա-  
ռաշարք շղթա յե տվել: Նվազախմբի ռազմա-  
կան մարշի տակ գնդերը շարժվում են առաջ:

Ղարաքիլիսայի փողոցներում աշխատավո-  
րությունը համակրանքի բացահանչուժ ունենալով  
ճամբու (ե դնում ամառվա իր աղից հյուրին), իր  
աշխատանքի ու գուլքի պաշտպանին:

Գետի ափով ձգված խճուղով, փոշու թան-  
ձրը ամպեր բարձրացնելով առաջ է շարժվում  
կարմիր հեծելագորը: Հեռվից նայողը՝ լեթե հա-  
ջողեց թափանցել փոշու քողը, տեսնում է մի-  
այն նիզակների անտառ՝ կանոնավոր շարքերով:  
Իսկ հովտի կանաչ մարգագետիններով լնթանա-  
լիս, լերը փոշի չկա, պողպատը փայլում է ար-  
ձաթի պես:

Շող է ու փոշի, իսկ այդ սրվա ճանապարհ-  
ը 25 կիլոմետրից պակաս չէ: Քրտինքն ակո-  
սում է լերեսից նստած թարմ փոշու շերտը:  
Դեռիցը ցեխաչուր է կաթում: Սակայն ում  
պետքն է, ով է խամ:

— Ակնի, շինքդ ձքելով ես գնում հա, բե-  
ռըդ հո ծանր չե՞, հարցնում եմ մի նիհար  
տղայի:

— Գո՞ դարդը քաշի, ինտելիգենտ մարդ ես,  
թամբը քամակտ կհարի: Յեվ բարեսիրտ կերպով  
ծիծաղում է, յերբ ասում եմ թե ձիու վրա  
«խամով եմ ընկնում»:

\* \* \*

Կեստրվա են շոգ ժամանակ գնդերը կանգ  
են առնում Հ. կայարանում:

Ձորերը շխշխկոց ու դղրղոց քցելով տեղ  
է հասնում նաև հրետանին: Թնդանոթները կանգ  
են առնում կանոնավոր շարքերով: Դեռ լերեկ-  
վանից այստեղ պատրաստ կանգնած է զրահա-  
պատ գնացքը:

Գետի ափին, բարդիների հովանու տակ,  
փափուկ մարգագետնի վրա մի քանի ըոպելյում  
վերակառուցվում է «սպիտակ քաղաքը»:

Լավ ճաշելուց հետո, ետեղ-ենտեղ խմբեր  
են կողմում և սկսում շուրջպարը: Զրահապատի  
ոռուսական վաշտը «դարձողիկան» բոքել է:

Այնտ սալակները գործում են, մի տեղ  
գիրք են բաժանում կ. բանակայիններին, մի  
ուրիշ տեղ գրամաֆոն են նվագում: Եքսպեդի-  
տոր Արմենակը դշի նման տեղ հասավ «Կարմիր



զինվորը դաւսում» թերթը ցրեց գնդերում ու  
գնաց: Կարգում են նստած գետափին, ծառերի,  
պատերի տակ, յերկաթուղու ուղիների վրա, ա-  
մեն տեղ:

Մի քանի բոպելում քաթանը մեխում են  
բարդի ծառերին և... կինոն պատրաստ է:

Իեղջուկները լսում են գրամաֆոնին հիաց-  
մունքով եկրանին նայում ու ակնածությամբ,  
զարմանքով դիտում զրահապատի պողպատե ո-  
ղերը:

— Սրան թոփն էլ քյար չի անի, բերթ ա  
բերթ, ասում է մի բիձա ու յերկուդածությամբ  
նայում զրահապատին:

\* \* \*

— Տո բարով Մայիս, Խնդանոս, Իոզոն՝  
վոնց եք:

Տավարած ընկերներս են: Մելոնց Մայիսը ար-  
դեն փոխ դասակապեա է, իսկ Ղալմանց Արթնի  
տղա Ակոփը վարժական դպրոցում սովորում է:  
Առաջ են գնացել, կրթվել, քաղաքական հարցե-  
րից են խոսում: Տեսքներն էլ փոխվել, հոգսի  
տակ կուչ եկած, կարկատած շալե շալվարով ու  
մոթալիսփախով հոտաղներն են գեմս կանգ-  
նած, — լայնաթիկունք, բազուկներն ամուր, յե-  
րեսները խաշված, բրոնզի փալ ստացած:

— Աղասին էլ է նստեղ: Ու կանչում են  
Աղասուն: Առողջ ու լայնալունջ մի տղա, շոկա-  
պետի նշանով, ժպտալով սեղմում է ձեռքս:

— Չէս ճանաչում:

Հագիվ եմ ճանաչում դեռ անցյալ տարի  
Գլամփա գյուղում բատրակ եր: Ֆիզիքապես  
հյուժված ու գունատ գեմքով տղա յեր: Քաշե-  
յինք կոմսոմոլի մեջ: Իսկ հիմի բատրակ Աղա-  
սին կոմունիստ շոկապետ է դառել բանակում,  
ամբացել է Ֆիզիքապետ և ստացել զինվորակա-  
լի համարձակություն:

Տես, վոնց են մարդիկ կազապարվում բանա-  
կում: Ակամայից հիշում եմ դաշնակցական կազար-  
ման, վորոտեղից տաս տարի առաջ մենք սալներով  
զիակ եյինք կրում դեպի գերեզմանատուն:

\* \* \*

Յերեկո յե: Յերկինքը պարզ է ու աստղա-  
զարդ: Յուբա է: Տեղ տեղ խարույկներ են վա-  
ռել և շուրջը կարգում են կամ շուրջն անում:  
Կինոն սալակով փոխադրվում է գլուզը և  
ցուցադրվում գյուղացիների մի անագին բազմու-  
թյան առաջ: Պարսպ ժամանակ, խարույկների  
շուրջը տղերքը մին մին միաներն են պում խ-  
րենց աները, լուրայիններին:

Տեղեկություններ են տալիս գլուզից:



Թագա խաբարներից մեկն էլ են է, վոր Մեկոնց Արամայիսը մի քանի շաբաթ առաջ նշանվել է:

— Հը Մայիս նշանածիդ կարոտել էս չէ: Յեվ ընկերները ժպտալով սպասում են պատասխանի:

Կարմրության մի թեթև ալիք է անցնում Մայիսի այտերով, իսկ աչքերը փայլում են խորույկի լույսից, թե...

— Կարոտում եմ, պատասխանում է նա քաշվելով, համա գեղում մնալ չի լինում: Մի քանի շաբաթ ապրեցի նշանածիս հետ շաաբաղը որեր անց կացրի մեր սարերումն ու քուլերումը, համա սիրտս կտարած եր. բանակին շաա էլի կարոտում: Վոնց վոր մեկը ինձ քաշեր Ղարաքիլիսի կողմը:

— Չե. հիմի իմ նշանածը «կազաչի» հրացանս ա. ճիտ եմ անում, գլուխս մի քարի զընում ու քնում... Սրանից էլ հավատարիմ ու ազիզ նշանած չկա. դրա համար էլ աչքիս լիսի պես եմ պահում:

Վորպիսի անկեղծությամբ ու համոզմունքով է խոսում այդ լեռնցի տավարածը.:

Ուշ գիշեր է, խարույկները մեկիկ մեկիկ մարվում են, յերգն ու կատակը դադարում է

և բանակը քաղցր ըուն է մտնում բաց յերկնքի տակ:

Միայն յերբեմն-յերբեմն գնացքները դղրդոցով գալիս են, զի՛լ ծղրտում, խրտնեցնում ձիերին և մի քանի ըոպելով խլում մեք քունը: Նորից ենք ընտ մ. հանգստանալ է պետք. վաղը գրոհի յենք գնալու թշնամու վրա, մեկ էլ ով դիտի հանգիստ քնելու պայմաններ կլինեն: Չե վոր արգեն մարտի վայրումն ենք:

Ղարաքիլիսա, սգոստոսի 24. ին 1928 թ.

### ԱՌԱՋԻՆ ՄԵՃԻ ԺԱԿԱՏԱՄԱՐՏԸ

— Վեր կանց... լավում է հրամանը քնի ամենաթունդ ժամանակը: Նոր միայն սկսում է լուսանալ:

Մարտիկները աշխուժությամբ վեր են թուշում, գետակում լվացվում սառը ջրով և շարք կանգնում: Վրանները ծալվում են մի քանի ըոպելում:

Բոլորը կազմ և պատրաստ են: Չիերն անհամբերությամբ դոփում են գետինը և փնջացնում:

Այսոր տեղի կուռենա հանդիպողական մարա:

Որվա ինդիլին է՝ զրահապատ գնացքը մի վաշտի ուղեկցությամբ պետք է գրավի Ն. կայարանը, և ախուհետև վաշտը պետք է զրավի



ու ամբանա 464 բարձունքում՝ մինչև գլխավոր  
ուժերի հասնելը:

### Զրահապատում

Վաշտը տեղավորվում է զրահապատին կց-  
ված բաց վազոնում:

«Բրանեկի» ի պողպատյա դռները բացվում են,  
մեզ ներս առնում և ելի ամուր փակվում: Պող-  
պատյա դնացքը սողում է և փնչալով առաջ  
շարժվում գետն ի վեր՝ ժայռերի միջև ձգվող  
լերկաթե ուղիներով:

Զրահապատի ներսում տեսնում ես միայն  
ծանր արկեր, փամփուռի արկղներ և մեկ ել  
թնդանոթների ու գնդացիների հեռակի մասերը:  
Լույս աշխարհ տեսնելու համար պետք է նայես  
թնդանոթի նեղլիկ դիտարանից կամ գնդացի  
ների համար բացված փոքրիկ անցքերից:

Թեև առաջուց զիծը հետախուզված է, սա  
կայն բրանեվիկը շարժվում է գզուշուխամբ: Կես  
ճանապարհին կենդ է առնում: Մի խումբ մար-  
տիկներ ցած են թռչում և անհետանում ժայռերի  
մեջ, ծերպերում: Հետախուզյներ են:

Զրահապատի ընթացքը դանդաղում է, ներ-  
սում կ. բանակալիները տենդալին արագութամբ  
փամփուռաներ ու արկեր են մատակարարում  
թնդանոթներին ու գնդացիներին:

Կապույտները լերեվում են Ն. կայարանից  
քիչ դեմը՝ դետի հովտում և դիմացի սարի լանջին:  
Զրահապատի աշտարակները պտրավում են  
մեքենայի ոգնությամբ և թնդանոթների բերան-  
ները ուղղվում են դեպի դիմացի լեռան լանջը:

Զրահապատը կանգ է առնում: Վաշտը մի  
մարդու նման թռչում է ցած, մի քանի ըսպե-  
յում գրավում կայարանն ու նույնանուն գյուղը  
և արագ ությամբ բարձրանում կապույտների գրա-  
ված կողքի բարձունքը:

— Հետեևակին... շրապներով, անկուռնաչափ  
20, 40, նշանացույց 105, փողո՞վ 105 հարթա-  
չափ 005, մարտկոցն՞վ կրակ...

Թնդանոթները վորտում են: Զրահապատը  
ումբակոծում է դիմացի լեռան այն շտկատներին,  
վորոնք լանջով առաջ են շարժվում կարմիրների  
վերելքը խանգարելու համար:

— Թ՛ում, բ՛ում... արկերը պալթում են կա-  
պույտների գլխին, մարտիկների կողքին, դեպի  
գագաթը ժայռերի վրա...

Կապույտները մի քանի շտկով սարի արև-  
մտյան լանջով են բարձրանում, իսկ կարմիրները  
արեվելյան: Կատաղի պայքար է սկսվում բար-  
ձրունքը զրավելու համար: Երբեք գագաթին ինչ  
գնով ել լինի. ահա խնդիրը:

Արևը կրակ է թափում սարալանջի մերկ

60722-67





կողերին՝ դռերի վրա: Փութ ու կիսից ավելի զինամանդերձը շալակին, կ. բանակայինն ուղղակի վազելով մագլցում է դիք սարի լանջը 25 բույեանընդհատ, առանց շունչ առնելու: Մարտիկներից մեկը 3-4 հարյուր մետր առաջ է, նա ստրահարթը հասնելուն պես շունչ առնելու փոխարեն՝ ինչքան ուժ ունի, թշնամու կրակի տակ վազում է դեպի գազաթը: Կապույտների ջոկն էլ է մոտենում գազաթին:

Մի քանի քայլ է ֆնայել: Անանուն մարտիկն իրեն շարժում է գազաթը, պառկում և, տրաք... տրաք... արագությամբ կրակում է գազաթին մոտեցող «թշնամու» ջոկի վրա: Զոկը գոհեր տալով սարալանջերով յետ է նահանջում:

— Իգիթ աղա ա երեվում հո. յարաբ վոթր տեղից ա, բացականչում է գլուղից կռվին սրտատրոփ հետևող մի բիձա և ձեռը ճակատին շարունակում է նայել գազաթը հերոսաբար պաշտպանող մարտիկին:

Սակայն... քիչ անց դրուժյունը փոխվում է: Պարզվում է, վոր կապույտների հրետանին և չորս վաշա կազմ ու պատրաստ կոնգնած են սարի քամակին:

Սկսվում է կապույտների գրոհը:

Նրանց արտիլերյան հարվածում է թե սարի գլխի կարմիր վաշտին և թե կայարանին:

Բրանկիկը կրակի տակ է:

— Մարտկոցով կրակ:

Թնդանոթները նորից են վորոտում:

Վաշտը սարի գազաթին որհասական կռիվ է մղում, իսկ մեր հեծելազորը, հրետանին, հետևակը դեռևս ոգնության չեն հասել:

Զրահապատի թնդանոթներն ու գնդացիները գործում են ամբողջ թափով, սակայն իզուր... կապույտ հրետանին չերեք անվամ խփում է մեր զրահապատի առաջ և չերկաթագիծը խորտակում: Առաջ գնալու հնարավորություն չկա: Իսկ լեռան բաց լանջին կապույտների հրացանների, գնդացիների ու Թնդանոթների գնդակների տարափի տակ բնաջինջ է արվում կարմիր վաշտը, վորին բրանկիկն ալլեկա աջակցել չի կարողանում: Սակայն վաշտը չի նահանջում, շարունակում է հերոսաբար պաշտպանել գրաված դիրքերը...

### Կապույտների դիրքերում

Կազում ենք մարդատար գնացքի քամակից և սլանում առաջ, Կարմիր հեծելազորը և հետեվակ ջոկերն արդեն հասել են կռվի դաշտը: Կռիվը տաքանում է, Անցնում ենք կռվի թունդ տեղով: Յերկաթգծի չերկու կողքերին, փոսերի մեջ պառկած են կարմիր և կապույտ ջոկերը գեմ





հանդիման: Կարմիր սահմանն անցնում ենք և գնացքից ցած թռչում կապույտների թիկունքում:

Կապույտ բանակայինները կտրում են մեր առաջ, ստուգում մեր մանդատները: Կասկածամտությամբ նորից են տնտղում մեր փաստաթղթերը:

— Ո՞ւր ե գնդի հրամանատարը:

Մատով գեպի իրենց գրաված բարձրունքն են ցույց տալիս: Բարձրանում ենք լանջով: Քարի տակից լենինականցու ձեն ե գալիս: Մոտենում ենք: Դեպոյի ու տեքստիլի բանվորներն են, բոլորն ել ՊԱՋԸ Ավիաքիմի անդամներ: Նրանց մոտ ե Լենինականի սանիտարական խումբը՝ կազմված առողջ ու աշխուժ բանվոր-կոմյերիտուհիներէց: Արևխաշ ու հոգնած են, սակայն զվարթ կատակում են:

— Տղերք, ձեզ յուրաքանչուրիդ քանի՞ փամփուշտ ունեք, հարցնում ենք մենք:

— Ռազմական գաղտնիք ե:

Ցույց ենք տալիս մանդատներ, վորով նրանք պարտավորվում են մեզ բոլոր գաղտնիքներն ասել:

— Յես մանդատ մուկուտ չեմ հասկանում, վոր ինքը Վորոշիլովն ել գա գաղտնիքը չեմ ասի, կտրուկ կերպով հայտարարում ե դեպոյի

բանվորներէց մեկը՝ կրակոտ մի կոմյերիտական:

Ներքուստ գոհ ենք: Չե, ՊԱՋԸ Ավիաքիմը տղերքին կարգին մարզել ե:

Պատահում ենք մի խումբ կարմիր բանակայինների: Չի հաջողվում նրանցից խմանալ իրենց բրանելիկի և հեծելազորի տեղը: Ամեն տեղ խիստ գաղանապահութուն:

Սարալանջը պատած ե հեռախոսալարերի վոշ նոսր ցանցով: Հեռախոսով հրամանն են հաղորդվում: Թնդանոթները մեր մոտից շարունակում են ուժեղանալ սարի մյուս փեշին գանվող կայարանը:

Հասնում ենք գագաթը, հրամկազմի մոտ: Դիմացդ բացվում ե ռազմի գաշտը: Բոլոր գործողութունները պարզ լերևում են հեռադիտակով:

Կատարելագործած մի բինոկլով նկատում ենք կարմիրների թնդանոթներից մեկը՝ քողարկված հեռու մի ցելի ծալրին: Հենց այնտեղից ել ուժեղանում են կապույտների գրաված սարի գագաթը: Արկերը պայթում են մեր կողքերին, վոտների տակ, գլխավերև, ուղում:

Մեր դիմացի սարում կարմիր վաշտն ալլևա չի դիմանում: Կապույտներից մի ջոկ հրետանու աջակցությամբ խիզախ սվինամարտի լե դի-



մում գագաթին ամբացած կարմիրների վրա վերջիններս ստիպված են լինում զոհեր տալով լեռան արևելյան լանջով նահանջել կայարանի ուղղությամբ:

Կարմիրների դեմ գրոհ ե արվում ա՛բողջ ճակատով մեկ: Կայարանից ներքև, դետի հովտով, առաջ են շարժվո մ նոր կովի դաշտը հասած կարմիր շուկաները: Բավական ուշ, նրանցից դենը, գարի լանջին յերևում ե կարմիր հեծեկազորը: Սակայն... ուժերն ուշ են հասել, առաջապահ վաշտը վոչնչացած ե, զրահապատը կրակին չգլխանալով ճղեց: Իսկ կապույտ բանակի շուկերն «ուռան» տալով մոտենում են կայարանին:

Մեր այն հարցին, թե առավոտյան կարմիր վաշտն ի՞նչպես կարողացավ առանց արտիլերիայի պաշտպանության գրավել դիմացի բարձունքը—կապույտների հրամանատարը պատասխանեց.

— Մենք ձեր յերևալուց կես ժամ առաջ արդեն գրավել ելինք այս բարձրունք: Փեշում վաղուց կանգնած ե մեր արտիլերիան, իսկ թիչ հետու բրանեվիկը, բացի դա՝ ձեր մեկ վաշտի դիմաց մենք բերել ելինք չորս վաշտ: Կարմիրների թույլ ավինք սարը բարձրանալ՝ իսպառ բնաջինջ անելու նպատակով:

## Մեծ Պարնու կամավորները

— Մենք Պարնի գեղից քսան հոգով ուզում ենք ձեզ քամագ անենք, ասում ելին մի խումբ գյուղացիներ մոտենալով կապույտների շտապին:

— Խնդրեմ, խնդրեմ՝ ձեզ աշխատանք կրտանք ձեր ուժերին համապատասխան:

Հեռները մի բիձա լել ե յեկել՝ աշխուժ ու ամրակազմ մի ունչալար:

— Բիձա, կռիվը քո ի՞նչ բանն ա, վոր յեկել յես, հարցնում ենք կատակով:

— Ո՛ւմ, հլո շահելի քեփին մտիկ արա, հինգ շան մի գյուլլըմը վեր կգցեմ, մի աչքով ես տեսնում:

— Բա վո՞նց ելավ, վոր յեկար կռիվ:

— Այտա շան, թոփերի ձենն անգաջս ընգավ թե չե, արինս սկսեց յեռալ, շահելությունս բռնեց. ասի՝ աղերք, գնանք, քանի վախա ա ակոփներումը չոք-չոք չեմ արել:

Յեվ Պարնի գյուղի ՊԱՋԸ-Ավիաքիմը գինվում ու մտնում ե դերբերը: Ու կատակում են:

— Ադա Միմոն, մղալիթ կաց, աչքին չտաս:

## Սվիևամարս

— Ո՛ւռա... սևոռա... լավում ե հեովից:

Նայում ենք յեռոտանու վրա դրված խոշոր հեռադիտակով: Մեր վոտների տակ՝ հովտում



կապույտների մի դասակ սվինամարտի չե բռնը-  
վում կարմիրների առաջապահ ջոկերի հետ:

Կայարանից դեռ՝ դաշտում ևս կապույտ-  
ների ջոկերն ուռա գոչելով առաջ են նետվում:  
Կարմիրների գնդացիները՝ ց թափվող արձձի տա-  
րափի տակ նրանք մոտենում են գյուղն ու կայա-  
րանը: Կարմիրները հետ են նսաննջում նաև  
հովտում: Կապույտների գրահապատ գնացքը  
հաղթական առաջ է շարժվում նահանջող գորա-  
մասերի հետեից: Ջոկերի հետ մենք ել ենք մա-  
նում գյուղ:

Կտրներին պառկել ու դիրք են մտել կ. բա-  
նակայինները: Գյուղի հերոսները, մայրիկները կը-  
ժերով ու կուլաներով շուր են հասցնում ծա-  
րավից պապակած կարմիր բանակայիններին:

— Ձեր ջանին մեռնե՛մ, բայեք ջան, իմ  
Ռուբենն ել ա սալգաթ, հիմա նա յել ա ձեզ  
պես քրանել, բեզարել, ու պառավը գոհ է, շատ  
գոհ, վոր «սալգաթին» սառը շուր տվեց:

Մեզ ջուր տվող կնոջը հարցում ենք:

— Ձեզանից կա՞ կարմիր Բանակային:

— Ձե, բայա ջան, կա վոչ, համա վեց տը-  
ղա ունեմ, են ա մեծագան թե չե, տարենը մի-  
նը ուղարկելու չեմ՝ մարդ դառնան: Աչքերս շուր  
կտրեց, աշունքը չեկավ, Ակոփիս ուղարկեմ մա  
լադոյ:

Ռուս կարմիր բանակայինների շաքարի վրա մի  
վագոն լերեխա յե հավաքվել: Շաքարն ստանում  
են ու վագոնը դեպի իրենց մայրերի փեշերի  
տակ:

— Ամա կուվում են հա... ղոչազ տղերք են,  
շատ... Մենք ել ենք սալգաթ ըլել, Նիկալայի  
սալգաթը, յե՛րք եր սըհենց դելրաթով, ծիծաղն  
լերեսին հանդը դուրս գալիս: Վոր մանեվրի ա-  
նունը տալիս ելին հենց իմանում ելինք դըժողք  
են տանում, — ասում է մի բիձա և հիացմունքով  
նայում ուս մարտիկների տուղջ ու ամուր  
կազմվածքներին:

— Ջանաթաթախ տղերք են հա...

Մինչեվ առյան վերջին կաթիլը

Գյուղի արևելյան ծայրում, բլրակի վրա  
աշխատում է մեն. մենակ մի գնդացի: Կար-  
միրների վողջ գորքը և հրետանին յեա ենահան-  
ջել ու ամրացել ներքևի քարափներում: Միայն  
մի ջոկ, գնդացիով, գերեզմանատնում ամրացած  
դիմադրում է:

Իսկ կապույտներն անհամեմատ գերազանց  
ուժերով գրոհում են:

Գյուղից մեկը մյուսի յետեվից դուրս են գալիս  
կապույտ ջոկերը և փորսող տալով առաջ շար-  
ժվում: Առաջ գնալու ճար չկա, Աբրահամյանը՝



վիթխարի մի մարտիկ, մաքսիմ գնդացրի քամակն անցած մենակ պահում եւ ամբողջ ճակատը, միչև լետեվում ամբանան կարմիր զորքերը: Կապույտները շատանում են, գալիս են չերեք կողմից կիսաշրջան օված: Փորձ են անում առաջ վազելու, սակայն...

—Տրա... տա... տա... տա... — մտում եւ գնդացրը: Կապույտները առաջ են քաշում իրենց գնդացրը:

Ճար չկա. մի ջոկ կապույտ եւ գալիս բլրի լանջով եւ գուրս գալիս գրնդացրի թիկունքում: Աբլահամյանը կրակում եւ մինչև վերջին շունչը, մինչև «սվինահար» լինելը...

Գնդացրի կրակը գաղաբելուց հետո, գերեզմանոցի ջոկը նահանջեւ ճար չունենալով «ուռա» տալով սվինամերկ առաջ եւ նետվում դեպի կապույտների զորքերը եւ հերոսաբար «վոչնչանում»...

### Մարտը այ թեվում

Տեղեկութուն եւ գալիս մեր աջ թևում տեղի ունեցած հանդիպողական մարտի ընթացքի մասին: Կարմիր դիվիզիայի առաջին գունդը մեղնից մի քանի տասնյակ կելոմետր հեռու, վարանցովկայի կողմից գրոհ եւ տվել կապույտների դեմ: Հակառակորդն անհաջող հակազորոն տալուց

հետո՝ ամրացել ե ձղխլարի լեռներում, լուկ մեր գունդն առաջ գնալու հնարավորութուն չունենալով՝ յետ ե նահանջել ե ամրացել Չիվթայի, Դյուզխարաբա ե Բողոխուշ գյուղերում:

### Կարսի սանիտարականները

Կապույտները ն. կայարանն ու գյուղը գրավելուց հետո՝ առաջ շարժվելու հնարավորութուն չունեն: Կարմիր զորքերն ամրացել են դիմացի սարալանջի թ. գյուղում, արտիլերիան ներքև ձորում ե, հեծգունդը նույնպես:

Կարմիրներն ուժ են հավաքում, նրանք հակազորոհելու միտք չունեն:

Հնչում ե զինադադարի փողը: Լուում ե հրաքանների ե թնդանութների վորոտը:

Հավաքում են «սպանվածներին» ու «վիրավորներին»: Կարմիրները տվել են 113 «սպանված» ու «վիրավոր»: 5 հոգի լել անհետ կորել են: Կապույտների կորուստի չափը մեղ հայտնի չե:

Ղարաքիլիսայից յեկած սանիտարական խումբը, չնոանդուն աշխատում ե: Նասիլկաներով մոտիկ գյուղ են տանում «վիրավորներին»: Աղջիկները քնքշությամբ փաթաթում են վիրավորների «վերքերը», Սպանվածներին թաղում են: Գործը վերջացնելուց հետո սանիտարները



մանում են Գյուլլուճա գյուղը, շրջում են աները  
և սանիտարական ուղնու թյուն հասցնում գյուղա-  
ցիներին, հիվանդներին դեղեր են տալիս, վեր-  
քեր են կապում: Գյուղացիներին շատերը յե-  
րախտապարտի զգացմունքով ելին խոսում կար-  
միր սանիտարականների աշակցության մասին:

Պատգամողական մարտի պատրաստություն

Կապուլտների գործերը գտնվում են Մեծ.  
Բեքյանգ գյուղում և Գյոքթիսուշում:

Կարմիրների 5-րդ գունդը Ն. կայսրանի ա-  
րևելյան բարձունքում խրամատներ և փորում:  
Չորս վաշտ և լեռնային թնդանոթներն ամրաց-  
րել են Թ. գյուղում և 750 բարձունքում: Ա-  
նանուն սարը և 548 բարձրունքը պաշտպանում  
ե մի գումարտակ, դաշտային թնդանոթները և  
ամենախոշոր «հովրից» թնդանոթը: Այդ ամբողջ  
գծի վրա կատարվում է ինքնախրամատացում:  
Կապում են նաև լարացանցեր: Հեծելազորն սը-  
կսել է հետախուզական աշխատանքը:

\*  
\* \*

Յերեկոյան կարմիր լանակայինները վրան-  
ները լսվում են Թ. գյուղի մոտ, իսկ իրենք  
գյուղի կալերում շուրջպար են բռնում: Վողջ

գյուղը հավաքվում է պարի, գրամաֆոնի, կինո-  
ի և ադիոտալակների շուրջը:

Այսպիսի աշխուժություն և տիրում, կար-  
ծես այդ նույն մարդիկ չէին գերմարդկ սին ջան-  
քերով սարը բարձրանում: Ուրախ շուրուղը գյու-  
ղացիների չես տևում է միչև ուշ գիշեր:

Առավարը պետք է շտապ խրամատներ փո-  
րել: Փամը 13-ին կապուլտները կհարձակվեն  
մեր պաշտպանողական ճակատի վրա:

Սպասենք, տեսնենք ինչ կլինի:

Նալբանդ, ոգոտոսի 27

1928 թ.

## Ն Ա Հ Ա Ն Ջ

Յերեկվա ունեցած հաջողություններից խրա-  
խուսված և ունենալով գերազանց ուժեր՝ կա-  
պուլտները նոր թափով սկսեցին հարձակումը  
կարմիրների պաշտպանողական ճակատի վրա:

Ճակատն ամրացված էր խնամքով: Գիշերը  
կարմիրները Ն. կայսրանից արևելք ձգվող բը-  
լուրներում փորել էին խրամատներ, անց էին  
կացրել հեռախոսագծեր և անագին տարածու-  
թյան վրա անկել էին սյուներ ու փշալարերի  
խիտ ցանցով պատել բլրի լանջերը՝ կապուլտ-  
ների առաջխաղացումը կասեցնելու համար:



Խրամասներում պառկած կ. բանակային-  
ները խնամքով քողարկված են ողային ուժերից:

Իեն լուսաբային սարի զառիվայրերով,  
քարափների վրայից ձգվող նեղ շավիղներով  
վեր են բարձրանում 2 մարտից և թնդանոթ-  
ները տեղավորվում են 756 բարձրունքում:

Իաշապին մարտիցը բռնում է 648 բարձ-  
րունքը, ծանր ու լայնաբերան «Հովրից» թնդա-  
նոթները ձորումն են բողարկված:

Կարմիր բանակային վարդանը դիտարանից  
աչալուրջ հետևում է թշնամու շարժումը:

— Թշնամին գրավում է դիրքերը, հայտ-  
նում է նա:

Տեղեկությունը հեռախոսով իսկույն հայտ-  
նվում է հրամանատարութանը:

Կապույտները թափվում են ձորը և քարե-  
րի տակով, կուզեկուզ առաջ շարժվում դեպի  
քարքարոտ բլուրները՝ դեպի կարմիրների դիր-  
քերը:

— Նշանացուց 110-ը, անկյունաչափ 20,  
40, փողակ 110, հարթաչափ 005, հրանոթով,  
կրակ...

— Մարտկոցով, կրակ...

Թնդանոթների համադարձի Հաուբեցան վո-  
րտում է ձորում: Նրա թափից գետինը դո-  
ղում է մեր վտառների տակ:

— Թնամ, բժււմ... նորից համապարկեր: Ձո-  
րերը՝ ժայռերն ու լեռներն արձագանգում ու  
բազմապատկում են վորտը:

616 բարձրունքի կատարին կենտրոնացված  
են կապույտների ջոկերը: Ծանր հրանոթը 4 5  
անգամ խփում է կապույտների մեջտեղը խու-  
ճապի մատնում նրանց: Սակայն նրանք նորից  
են հավաքում իրենց ուժերը և հրետանու աջակ-  
ցությամբ առաջ շարժվում՝ զգուշ ու քողարկված:

Կապույտները ջանում են ձորից դուրս գալ  
դաշտը, սակայն հանդիպելով կարմիրների մար-  
տական պահպանութան ջոկերի խիզախ հակա-  
դրոճին, կուշ են գալիս քարերի տակ: Ք դարկ-  
վում, ամրանում:

Կապույտներն արդեն փոքրիկ խմբերով  
դուրս են լեկել ձորից և արտերով ու սելերով  
կուզեկուզ առաջ են շարժվում:

Աջ կողմից կարմիրների № ջոկը գնդացի-  
բային կրակ է բացում:

Տը... տը... տը... տը... տրան... տրան...  
տրան... մաղում են գնդացիները, իսկ կապույտ-  
ները հանդիստ առաջ են շարժվում:

— Գնդացիքը փոխադրել հաջորդ դիրքը և  
անընդհատ կրակ բացել թշնամու վրա, — հնչում  
է հրամանը: Գնդացիքը Դերենիկը, ամրակալմ



մի մարտիկ, շալակում ե «Մաքսիմ» գնդացիքը  
և սարն ի վեր վազում առաջ: Կարծես բեռ չը-  
կա շալակին: Նոր դիրքերից նորից կարհուրա-  
տեղում կապույտների գլխին:

Սակաջն մարտական պահպանության ջոկերը  
հիմնական զորամասերին գլխադր՝ և չեն կարող  
կապույտների հրետանին արագ ուժակոծում ե  
յետ նահանջող ջոկերին և զիմացի բլուրներում  
ամրացած կարմիրներին:

Մեր ձախ թևում Թախանյովի լեռներում ես  
թշնամին ուժեղ գրեհ ե տալիս Այդ լեռներում  
ամրացած թնդանութները խփում են կապույտ-  
ների ձախ թևին, իսկ մեր աջ թևի հրանութնե-  
րը խփում են զիմացի լեռներում հարձակմ ն  
անցա՝ կապույտների ձախ թևին: Ստացվում ե  
խաչաձև կռակ վարը մեծ կորուստներ և պատ-  
ճառում կապույտներին:

\* \* \*

Կարմիրների թիկունքում ամրացած հրե-  
տանու զրուժյունն ս ուղեւուց հետո՝ մարա-  
կում ենք ձիերին և սլանում դեպի առաջավոր  
դիրքերը, դեպի արձձի կարհուրա բերանը:

Առաջներին բլրաշարքից ավելի ուժգին են  
վորոտում գնդացրինները: Վերևի սարից մի ես-

կադրոն հեծելազոր իջնում ե: Կարծես յետ ե  
նահանջում:

Ձիերին մարակում ենք, սլանում առաջ և  
դուրս գալիս բլուրներից ամենաբարձրի գագա-  
թը, վորտեղից չերևում ե ամբողջ Փրոնտը:

Կապույտները նորից դաշտումն են. իսկ  
կարմիրները բլրակների ամբողջ շարքից բացել  
են գնդացրային կրակ: Դրուժյունն անփոփոխ ե  
Միայն Ա... կայարանից և Անանուն սարից կա-  
պույտները նորանոր ուժեր են ստանում և  
դաշտում ավելի խիզախորեն փորտող տալիս դե-  
պի առաջ, դեպի բլուրները:

Բլրաշարքի վերին ծայրի քարերում ամրա-  
ցել ե սամելվեցի Սհակի շոկը:

Սհակի ընկերը, գնդացրորդ թալցի Մովսե-  
սըն անտեղի փամփուշա չի կրակի: Այ ուրիշ  
բան ե, չերբ զիմացող կապույտները ցելի ծայրին  
հավաքվում են շուր խմելու:

— Նշանացուց 6, շուր խմողների կենտ  
րոնում կրակ, հրահանգում ե Սհակը:

— Տրա-տրա տա-տա... Մովսեսը ծաղրա-  
կան ժպիտով նայում ե կապույտներին խուճա-  
պին և բաց ե թույնում ամբողջ լենտը:

— Հը, կերձք:

Մի քանի շոկ կոտորեց թալցի Մոսեսը:



Յե՛վ պարզ յերևում ե, վոր ճակատի վերին ամբողջ գիծն այդ շոկն ե պահում:

Վերևից, սարի լանջով ցած իջնող եսկադրոնը հասնում ե Մհակի բլրի յետևը:

Ձիերից ցած են թռչում չորս գնդացիր դնում բլրի գագաթին՝ կոմյերիտական շոկի գլխավերևը:

Հրամանատարը դարբաղցի Աշոտն ե, ափ դահա ու լայնաբերան մի կոմյերիտ:

— Առաջին, յերկրորդ և յերրորդ գնդացիները, նշանացույց 10-ը, բացված թշնամուն կրակի Յերեք գնդացիները կակտում են միաբերան և հնձում այն խմբերը, վորոնք նոր միտին ձորից դաշտ դուրս չեկան:

Կապույտների կորուստը մեծ ե: Առաջ շարժվելու հնարավորութուն չկա:

Իրութունը միայն հրետանին կիրկի, թե չե հրայաններով բլուրներից կարմիրներին չես կարող քշել: Յե՛վ թնդանոթներից ուժեղ կրակ են տեղում մեր բլուրների վրա Արևերը պայթում են ուղղակի դիրքերի մեջ, դիտարանում, անընդհատ: Խորտակում են մեր փշալարացանցը: Խփում ու մեջտեղից վերացնում են մեր գնդացիքը և ամբողջ շոկեր: Ու հրետանու աջակցութեամբ կապույտները բաց դաշտից անցնում են մեր բլուրների ստորոտները և ժայռերով մտքբլցում դեպի վեր:

\* \* \*

Կապույտների գլխավոր ուժերը գործում են աջ թևում: Ձախ թևը թուլլ ե: Ձախից, գետի հովիտն ի վեր մեր հեծելազորը մի պարտիզանական հարձակում ե գործում, շփոթեցնում թշնամուն և յետ նահանջում:

Սակայն այլևս ուշ ե:

Տալիս ենք ճակատի առաջին գիծը, առան շատ բլուրները և ամրանում յերկրորդ բլրաշարքում:

Նորից թնդանոթների վորոտ, նորից գնդացիների ճարձատյուն, նորից հրացանների համադարկեր...

— Թշնամին գրավեց դիվիզիոնի հրամանատարի դիտարանը: Հայտնում են հեռախոսով:

Կապույտներն ամրանալով մեր տված բլուրներում, վերջին գրոհն են տալիս յերկրորդ բլրաշարքին: Մեր եսկադրոնը նահանջում ե: Նահանջում ե նաև արտիլերիան: Նահանջում ենք, վորովհետև թշնամու մի դիվիզիայի դիմաց միայն մի շոկատով ենք մարտնչում:

Չորի մյուս բերանին, քարափների վրա մի շոկ դիմադրում ե ամբողջ ճակատով մեկ, մինչև վոր հետևակ դասակն անցնի ձորը: Դասակը մտնում ե կիրճը, վեր մագլցում ժայռերով և կրակ բացում կապույտների վրա՝ հերոսաբար



կովող ջոկը փրկելու նպատակով: Ժայռերի արանքով ընկած նեղ շավիղներով ջոկը հաջողությամբ ձորն է իջնում ու ազատվում:

Իսկ հեռու, ձախ թևում, մշուշապատ լեռների զառիվայրերով ներքև է իջնում մեր հրե-տանին:

Նահանջում ենք ամբողջ ճակատով...

Ոգոտտոսի 30 Համամու

Թնդանոթներին ձայնակցում է ամպերի վորտոր: Տարերքն իրար են խառնվել, փրփրել: Սկսվում է հեղեղը: Ցեխ է թափվում վերևից ջրի ու փոշու խառնուրդ:

Ողում պայթող ռակետների կամ ամպերում ճալթող կայծակի վայրենական լույսով տեսնում ես կարմիր ջոկերին կուզեկուզ առաջ շարժվելիս՝ քարերի արանքով, հեղհեղաանների միջով...

Վո՛չ խավարը, վո՛չ անեղ փոթորիկը և վո՛չ էլ դիմացի լեռներից ավող թնդանոթների ու գնդացիներին համազարկերը չեն կասեցնում կարմիր գորամասերի հաղթական արշավանքը:

Ահավոր՝ բայց հոյակապ մի գեղեցիկություն կա դիշերային մարտում՝ փոթորիկի ժամին...

\* \* \*

Հետախուզային դասակը բաղկացած հարյուր ձիավորներից զգուշությամբ պատում է խավարն

ու փոշու ամպերը և առաջ շարժվում: Հեծելախմբի առաջից ընթանում է կարմիր զորքերի հըրամանատարական կազմը: Վաշտի առաջ դրված է պատասխանատու խնդիր—հետահուղել վողջ ճակատը, վորի ավյալներով պետք է կատարվի կարմիր գորքերի առաջխաղացումը: Այնքան մոլթ է, վոր «մատղ մարդու աչք կոխես, չի տեսնի»: Ջրերն առաջ են խոչանում փնջայով, թոշում են հեղեղաաններից, խրվում ցեխի մեջ և խրանում մոտիկում պայթող մի հրթիռից կամ թնդանոթի վորտորից:

— Տո՛ք — արձք, արձք... լսվում է հրացանների խառնիխուռն պայթույթները սահաբադի (արտի քյանարի) տակից՝ ձիերի մոուլթների դիմաց կայծակի լույսով փայլում են մեկնված սվինները:

— Զինաթափ... հնչում է խրոխտ հրամանը: Հեծելազորը շրջապատված է կապույտների առաջապահ ջոկերով:

— Սուսերո՛վ, հառա՛ջ, Լսվում է կարմիր հրամանատարի հրահանգը: Հայրուր սուր միանգամից դուս է գալի պատյանից և փողփողում՝ ռակետների լույսի տակ...

Կապույտների հետևակ ջոկերը վորտորնդոտ «ուռա» ներով սվինամերկ առաջ են նետվում դեպի կատաղած ձիերի կրակ ժայթքող ուռնգերը...



Սկսվում է շարժը: — Կապույտները կրակում են անընդհատ՝ չորս կողմից սփինահար են անում ձրերին, հեծյալներին տապալում են ցած: Փախչելու հնարավորություն չկա: Յե՛վ հեծելազորը մերկ սրերով նետվում վորոտացող հրացանների կրակ ու ծուխ ժայթքող բերանները... Սավարի մեջ ձիերը խոչանում, ծառս են լինում՝ իրար զրկում, սրերը շրխկոցով ընդհարվում են իր անր ու կայծեր արձակում, հեռականները արորվում են կատաղած ձիերի սմբակների սակ և այդ դժոխքի մեջ յուրաքանչյուրը շանում է խավարի մեջ ճանաչել զիմացիսին ու նիզակի ծայրը շեշտակի խրել «թշնամու» կուրծքը:

Մնավոր մարտը կարճ է տևում, սակայն տալիս է սոսկալի հետևանքներ: Մի քանի րուպելում վոչնչանում է կարմիր հեծելավաշտի յերեսուն տոկոսը: Կարճ կռվից հետո, մի քանի տասնյակ զոհերի գնով, կարմիրներին հաջողվում է գերել կապույտների առաջապահ ջոկերը:

\* \* \*

Փոթորիկն անցնում է, լերկինքը պարզվում: Լուսինն իր կտր գեմքը ցույց է տալիս զիմացի սարի լանջից: Զատիվալքերում ու հեղեղատներում պսպղում է կաթնագույն անձրևաջուրը: Թմբերի հետևից ցեխերի մեջ թաղվելով առաջ է շարժվում

կարմիր հրետանին: Բանակայինի շինելն անձրևաջուրն առատությամբ ծծել ու փթից անցել է Սակայն ընկճվող չկա՝ ծանրության տակ:

Լուսինը, լեռներից փշող մեղմ գեփյուռը՝ յեռանդ է բերում կարմիր մարտիկներին: Յեխի մեջ սայթաքվելով, քարերը գրկելով, թփերի տակ կուչ-կուչ անելով ու քողարկվելով՝ առաջ են շարժվում կարմիր ջոկերը:

Գիմացի լեռնաշղթայից կարկտի նման տեղում է գնդակների տարափը: Կապույտները քաջ գիտակցելով, վոր լեռնաշղթան արվելուն պես արվելու է նաև և, քարաքը, զիմադրում են ամբողջ թափով: Սարերի հետևում կանգնած հրետանին անընդհատ ու մթակոծում է կարմիրների ճակատը, առաջ խաղացող ջոկերին: Բլուրներից անընդհատ կտկտում են զիզացիքներն ու արվում են հրացանային համազարկեր:

Առաջ է քաշվում կարմիրների հրետանին: Բլուրների լեռնավում քողարկված թնդանոթները զզրդոցով հարվածում են լեռնաշղթայի մեջքին ու լանջերին ամրացրած վաշտերին:

Արտեղերիայի կործանիչ հարվածներին, գնդացիքների կրակին և կարմիր գործասերի խիզախ գրոհին չզիմանալով՝ կապույտները հանձնում են Փրոնտի վերջին ամբուխյունն ու մինչև և, քաղաքը մի շնչում գշում:



Կուսագեմին զուրս ենք գալիս Զաջուսի գա-  
գաթներն ու լիաթոք շնչում վաղորդյան սառն  
ոգը:

\* \* \*

Լենինի անվան քաղաքը տոնական տեսք է  
ընդունել: Քաղաքի ծայրին Տերսուլի լերիտա-  
սարգ բանվորութիւնը խանդավառ «ուռա»-նե-  
րով վողջունում է կարմիր գործասերի հազ-  
թական մուտքը քաջաք:

Լենինական սեպտեմբերի 1

### ՎԵՐՋԻՆ ԳՐՈՂԸ

Յերեկվա նահանջից հետո կարմիր զորքերն  
ամրացել են Ն. կայարանից արեւելք ընկնող  
յերկորդ բլրաշարքում և թ. դյուդի թիկունքի  
բարձրաբերձ լեռներում: Կարմիր գնդին ոգնու-  
թյան են լեկել մի դվիդիոն ևս: Ամբողջ գիշերը  
հարձակման համար լեռանդուն պատրաստութիւն  
ենք տեսել:

Կարմիրները № վաշտն աջ թեփից մտնում  
է ձորը և մագլցում Անանունի լանջերն ի վեր:  
Անանունից հյուսիս ընկած լեռնաշղթայի գագաթ-  
ներից մեկը ձգվում է մինչեւ ամպերը:

№ վաշտը բարձրանում է հյուսիս և կա-

պույաներից աննկատելի, հյուսիսային փեշերով  
մագլցում է ամենաբարձր գագաթն ու գրավում  
կապույտների ձախ թեփը:

Կապույտները տեսնելով, վոր ձախում ըն-  
կած ահազին լեռը գրավված է, խուճապի լեն  
մասնվում:

— Յես ձեր... տես վոնց են բարձրացել —  
կատաղած հայիտում է ուսս կարմիր բանակա-  
լինը և զարմանքով նայում գագաթին՝ անհասա-  
նելի բարձրունքում թառած կարմիր բանակային  
ներին:

Առաջ է քաշվում կարմիր հերտանին:  
«Հաուրեց»-ը նորից է դրդում անդեգախոր ձո-  
րերում:

Թնդանոթի արկերը պայթում են Անանու-  
նի և իր հարեվան բալձունքների խրամատն է  
րում ու ծխի ամպեր առաջացնում: Հրետանու ա-  
ջակ ցուլթամբ № վաշտը գրավում է Անանունը:  
Կարմիրներն առաջ են շարժվում ամբողջ  
ճակատով:

Գագաթներից մեկում ամրացել է մի ջոկ.  
կապույտ գործասերից: Նրա վրա գնդակների  
տարափ է տեղում լերեք կողմից: Նորլորդ կող-  
միցն էլ հարվածում է հրետանին, սակայն ջոկն  
ամբողջ աջ թեփը հերոսաբար պսշտպանում է  
լերկար ժամանակ և հնարավորութիւն է ապիս



կապույտ զորքերին նահանջելու՝ համեմատաբար  
բիշ կորուստներով:

— Ուռն... ուռն... թմբերի ու ժռոյների  
հետեվից կարմիր մարտիկները դուրս են գալիս  
և հրացանների մեղանդից ամուր բռնած առաջ  
վազում դեպի կապույտների վերջին հենակետը:  
Սվինամարաը կարճ է տեղում. կապույտները  
պոկ են գալիս ու ճզում վերջին գազաթից ևս:

Սակաջն նրանց հրետանին դեռ էս չի նա-  
հանջել: Նա շարունակում է սարերի քամակից  
անբախտել առաջ շարժվող մեր զորամասերին:

Չախ թեվի բարձրունքներից մեր վաշտերը  
բարձրագույն «ուռն» ներով մտնում են թ. դուրը  
և այնուհետեվ թշնամուն քշում են Ղ. կայարանի  
ուղղությամբ, կապույտների զրահապատ գնացքն  
աղեկաուր սուլոցով մինչեվ Ղ. կայարանը մի  
շնչում է փախչում:

Սարերի փեշերով արշավում են մեր ձիերը  
քշի թե, վոր հասնես նահանջող ջակերին:

Փախչում են վարպետորեն ու անասելի ճար-  
պիկությամբ: Տեղ տեղ արերգարդ (վերջապահ)  
ջոկերն ամբասնում են քարերի լետեվում արագ  
արագ կրակում են իրենց հետապնդող կարմիր  
հեծեղազորի վրա և կասեցնում նրա առաջխաղա-  
ցումը: Այդպիսով կապույտների համար հաջո-

ղությամբ ( և «քաջաբար» ) նահանջելու հա-  
րավորութուն է ստեղծվում:

Ղ. կայարանի մոտ կապույտները բաց դաշտ  
են դուրս գալիս: Կարմիրները նրանց վրա  
գնդացրային կրակ են բացում դիմացի բլուր-  
ներից: Այդ դաշտում կապույտներից շատ կո-  
տորվեցին, անչափ շատ...

Վերջին անգամ վորոտում են պարտված  
թշնամու թնդանոթները:

— Այ ողույ, բերանդ բաց կանուծիս կեն-  
ե. խրատում է Լենինականցի թնդանոթաձիգը:  
Ինչ արած: պիտի բացենք: Ու բերաններս բաց,  
թնդանոթների վորտի տակ առաջ ենք շարժ-  
վում նահանջող թշնամու լետեվից...

\* \* \*

Իրիկնադեմ է: Լեռներից ուժգին փչող  
հողմը պտույտներ է դործում փոշոտ ճանապարհ-  
ներում, մերկ բլուրների վրա՝ ավլում ու բերում  
է դետինը և փոշու հսկայական սուլներով  
արշավում մարտի դաշտ դուրս չեկած բանակա-  
լիների վրա:

Յերկիրքը սևանում է: Փոշու ամպերը շն-  
չահեղձ են անում մարտի դուրս չեկած բանա-  
կայիսներին: Պառտահողմը քշում է հեծյալնե-  
րին, փախցնում ու տանում է շինեղներ գլխարկ-  
ներ:



Փոշու ու թանձր խավարի միջից հնչում են  
ուղմի փողերը: Լսվում են հրացանների առա-  
ջին տրաքոցներ ու հեծելազորի ամուր դոփյուներ:  
Սկսվում է վճռական և անեղ ճակատա-  
մարտը: Վերջին գրոհն է կարմիրներին խնդիր-  
ց տրված — գրավել զիմացի լեռներն ու արշա-  
վել և քաղաքի վրա: Բայց վերն է լեռը, վերը  
ճանապարհը կամ սվ է թշիամին, սվ բարեկամը:  
Փոշու ամպերի մեջ վոչինչ շոկել չես կարող:  
Համատարած խավար է շուրջդ սարսափելի ու  
չարագուշակ խավար:



ՀՀ Ազգային գրադարան



NL0325871



ԳԻՆԸ 20 ԿՈՊ. (1<sup>1</sup>/<sub>2</sub>, մ.)

39-  
A  
199

ՅՄՄ

1  
9



Յ. ԱՆԱՆՅԱՆ  
Մ Ա Ն Ե Վ Ր

Գոստատ ԵՍՐ Արմենի  
Երևան—1991